պում էին պատարագ մատուցանել կամ այլ ծէսեր կատարել: Ես երբեք չեմ կարող մոռանալ, երբ այսպիսի հանդէսներից մէկի մէջ խանը հրամայեց քահանային սաղաւարտը դնել իր շան գլխին, շուրջառը գցել նրա վրայ, եւ ստիպեց տէրտէրին իր բուրվառով խնկարկել շանը: Տէրտէրը ի հարկէ չկատարեց հրամանը: Ողորմելի քահանային շան հետ միասին գցեցին մի տոպրակի մէջ, բերանը կապեցին եւ սկսեցին բազմութեան առջեւ փայտով ծեծել: Քահանայի հառաչանքը, շան կնձկնձոցը, միախառնելով միմեանց, դարձեալ զարհուրելի էին պատճառում անգութ բարբարոսներին:

Մահմեդականները չունէին զօրանոցնէր: Հայոց վանքերը եւ եկեղեցիները միշտ ունեցել են եւ ունէին օթեւաններ, եւ պատերազմների ժամանակ նրանք դառնում էին մահմեդական զինորների բնակարաններ. իսկ սուրբ տաճարը, որովհետեւ աւելի ընդարձակ էր, գործ էին դնում որպէս ախոռ ձիաների համար: Ի հարկէ, միեւնոյն ժամանակ կողոպտում էին ինչ որ գտնւում էր տաճարի մէջ: Շատ անգամ եւս վանքերը եւ եկեղեցիները ծառայեցնում էին որպէս ոչխարների ձմեռանոցնէր: Ի՞նչ հայ կարող էր ընդդիմանալ, ո՞վ կարող էր մի խօսք ասել, նրա լեզուն իսկոյն կը կտրէին:

Քանդուած վանքերը, եկեղեցիները կրկին նորոգելու կամ կարկատելու իրաւունք չկար: Շատ անգամ պատահում էր, տաճարի կտուրը ծածկւում էր կամ ճեղքւում էր. ձիւնը, անձրեւը, ցած էր թափւում: Որմնադիր հրաւիրել անկարելի էր: Վարդապետները, քահանաները, եթէ միջոց էին գտնում, շինում էին գաղտնի, այն եւս գիշերով: Ծա՜նր էր մի այսպիսի յանցանքը, եթէ յայտնուէր նա. պատիժը վերջանում էր ամենասարսափելի կերպով: Նոր վանքեր կամ եկեղեցիներ շինելու թոյլտուություն չկար. այդ կարող էր յաջողել այն ժամանակ միայն, երբ մի մեծ գումարով քիրստոնեաները կը գնէին այս եւ այն իշխանի հաճութիւնը: Իսկ զանգակի ձայն ամենեւին չէինք լսում. զանգահարութիւնը արգելուած էր:

Մահմեդականների հալածասիրութիւնը ոչ միայն բռնաբարում էր քրիստոնեաների կրօնական ազատութիւնը, ոչ միայն սրբապղծում էր ամէն ինչ, որ նրանց համար նոիրական եւ աստուածային էր, այլեւ արատաւորում էր նրանց ընտանեկան պատիւը: Ես գիտեմ հարիւրաւոր եւ հազարաւոր օրինակներ, թէ որպէս հայ կինը, հայ աղջիկը զոհւում էր մահմեդականի անբարոյական կրքերին: Ես երբեք չեմ կարող մոռանալ, — այս պատահեց մեր քաղաքում — երբ խանի սպասաւորները եկան իրանց տիրոջ համար տանելու մի աղջիկ. հայրն երկար աղաչում էր, որ չխլեն իր աղջիկը: Երբ հօր արտասուքը չկարողացաւ շարժել նրանց գութը, նա առեց մի դանակ, եւ խրելով իր դստեր կուրծքի մէջ, ասաց՝ «հիմայ տարէք այս դիակը»: Նոյն օրը